ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Շիրակի ուսուցիչների միություն» գիտակրթական կենտրոն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա ***<u>Դարձվածքների դերը հայոց լեզվի ուսուցման գործընթացում</u>***

Կատարող՝ <u>Սաթենիկ Հակոբի Ավետիսյան</u>

<u>ՀԱՊՀ Գյումրու մասնաճյուղի ավագ դպրոց, հայոց լեզու և գրականություն</u>

Ղեկավար՝ <u>Կարինե Ալեքսանյան</u>

ԳՅՈՒՄՐԻ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------3
Գլուխ առաջին: ***Գլուխ առաջին: Դարձվածքների ուսուցման նշանակությունը դպրոցում*** ----------***4***
Գլուխ երկրորդ: Դարձվածքների ուսուցումը հիմնական և ավագ դպրոցներում 12
Եզրակացություն----------20
Օգտագործված գրականություն----------21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական հարցն է. «Դարձվածքների ուսուցման շրջանակներում ի՞նչ հնարներ են օգնում՝ զարգացնելու լեզվական կարողունակությունը»:

Հետազոտական աշխատանքի նպատակներից են.

1. Ընկալել բառակապակցության և դարձվածքի տարբերությունը
2. Նշել դարձվածքների փոխաբերական իմաստները
3. Բացահայտել դարձվածքների ոճական արժեքը պատկերավոր խոսք կազմելիս
4. Դասակարգել դարձվածքները ըստ գործածության ոլորտների
5. Մատնանշել դարձվածային միավորների տարբերակները
6. Զարգացնել կապակցված խոսքում դարձվածքներ կիրառելու ունակություններ
7. Ուսումնասիրել դարձվածքների առաջացման աղբյուրները:

Հետազոտական աշխատանքում կուսումնասիրվեն այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ ի՞նչ է դարձվածքը, Որտեցի՞ց են ծագում առաջանում դրանք, ի՞նչ տեսակներ կան, ինչո՞վ են դարձվածքները տարբերվում մյուս կայուն կապակցություններից:

Եթե դպրոցում ուսուցչի օգնությամբ աշակերտները կարողանում են տալ այս հարցերի պատասխանները, ապա մեծ է հավանականությունը լեզվական կարողունակություն ձևավորելու: Սովորողները կտիրապետեն ինչպես մայրենի, այնպես էլ օտար դարձվածքներին, գրավոր և բանավոր խոսքում դրանց ճիշտ կիրառելուն, ճանաչելու, ըմբռնելու, մեկնաբանելու, ստեղծելու տարբեր հայեցակարգեր դարձվածքների վերաբերյալ:

Լեզվաբանները դարձվածք են համարում խոսքի անազատ կապակցությունները, որը դարձվածքի առաջին հատկանիշն է: Դարձվածքի մյուս հատկանիշը համարվում է այն, որ դրանք խոսքի պատրաստի կապակցություններ են:

Գլուխ առաջին: Դարձվածքների ուսուցման նշանակությունը դպրոցում

Դերբայական դարձվածի ուսուցումը կարևոր նշանակություն ունի, քանի որ դերբայական դարձվածի իմացությունն ու տեղին գործածելը նպաստում է տրամաբանական մտածելուն, խոսքի ճիշտ կառուցմանն ու զարգացմանը:

Որպեսզի դերբայական դարձվածի ուսուցումը նպատակին ծառայի, այն պետք է մատուցել մանրամասնորեն և աստիճանաբար՝ անհասկանալին դարձնելով հասկանալի, դժվար ըմբռնելին՝ դյուրըմբռնելի:

Դերբայական դարձվածի մասին ճիշտ գաղափար կազմելու, նրա նշանակությունը հասկանալու համար անհրաժեշտ է, որ սովորողը լավ իմանա.

ա) դերբայի տեղը խոսքի մասային համակարգում

բ) դերբայով բառակապակցություն կազմելիս հնարավորությունները

գ) դերբայական դարձվածը՝ որպես շարահյուսական միավոր

դ) դերբայական դարձվածում հանդես եկող անդամների շարահյուսական դերը

ե) կետադրություն

Դասագրքում դերբայական դարձվածների տրոհման մասին խոսվում է երկու տեղ՝ տրոհվող անդամներին և դերբայական դարձվածին նվիրված բաժիններում: Չնայած դրան՝ դերբայական դարձվածի տրոհումը, հավանաբար դասագրքի ծավալով պայմանավորված, հանգամանորեն չի ներկայացվում. չի ասվում, թե որ դերբայներով են կազմվում տրոհվող դերբայական դարձվածները, և դերբայական դարձվածի տրոհումը կապվում է ծավալուն լինելու հետ, ինչը շատ դեպքերում նրա կետադրումը անլուծելի խնդիր է դարձնում, քանի որ պարզ չէ, թե որ դերբայական դարձվածը պետք է ծավալուն համարել, որը՝ ոչ: Մինչդեռ գոյություն ունեն որոշակի կանոններ, ըստ որոնց՝ որոշակի դերբայներով կազմված դարձվածները որոշակի դեպքերում տրոհվում են: Հենց այդ կանոններով էլ պետք է առաջնորդվել դերբայական դարձվածի տրոհմանը վերաբերող, կամ այդպիսի տրոհում պարունակող առաջադրանքներ կազմելիս: Պետք է խուսափել ստորադաս նախադասություն պարունակող առաջադաս դերբայական դարձվածի և դերբայական դարձվածին համազոր անդամով

կազմված լրացումների խմբի կետադրում պահանջող առաջադրանքներից, քանի որ այդ կառույցներից առաջինը երկակի կետադրություն կարող է ունենալ, իսկ երկրորդին դասագիրքը չի անդրադառնում:

Այն բառակապակցությունը, որն արտահայտված է որևէ անկախ դերբայով և նրա հետ քերականորեն կապված անդամներով (լրացումներով), կոչվում է ***դերբայական դարձված***: Դերբայական դարձվածի ձևավորմանը մասնակցում են անկախ դերբայները (***անորոշ, ենթակայական, հարակատար, համակատար***) և դրանց հոլովված ձևերը: Այսպիսով՝ դերբայական դարձվածը բայական բառակապակցություն է, որի գերադաս անդամը դերբայն է, և նրանով էլ որոշվում է տվյալ դերբայական կապակցության շարահյուսական կիրառությունը՝ պաշտոնը: Սակայն որքան էլ կարևոր լինի դերբայի դերը, այն, առանձին վերցրած, առանց լրացումների, բառակապակցություն, հետևաբար՝ դերբայական դարձված կազմել չի կարող: Թեև պատահում են այնպիսի կառույցներ, որոնցում միայնակ դերբայը տրոհվում է, երբ նրան հաջորդում է մի արկրորդական նախադասություն, որը լրացնում է այդ դերբային:

Օրինակ՝ Նա ջղայնանում էր՝ **չիմանալով**, թե ինչ պատասխան տա եղածի համար: Իշխանը զարմացավ՝ **տեսնելով**, որ ձկնորսները լապտերով լճի խորքը գնացին:

Հանդիպում են նաև այնպիսի բառակապակցություններ, որոնցում դերբայը չի արտահայտված, բայց հնարավոր է այն վերականգնել (թեև ոչ միշտ):

Օրինակ՝ Ներս մտավ Շուշանիկը՝ **սկուտեղը ձեռքին**:

Այնինչ՝ աղջիկն առաջ եկավ՝ **կարմիր խնձորն իր ձեռքին**:

Լապտերավառը, **սանդուղքն ուսին**, շրջում էր փողոցում՝ լապտերները վառելու: Ավան ամին, **մեծ դանակը ձեռքին**, այգուց էր շտապում՝ պատվաստներն ստուգելու:

Հանգստանում էր հողմը բացատում՝

Ականջն ամպրոպի ազդանշանին:

Դերբայական դարձվածները նախադասության մեջ հանդես են գալիս և՛ տրոհված, և՛ չտրոհված: Դերբայական դարձվածի տրոհվել-չտրոհվելը մեծապես կախված է մի քանի հանգամանքներից՝ շարադասությունից, պաշտոնից, ծավալից, քերականական ձևավորումից, հնչերանգից և այլն:

Սովորաբար չի տրոհվում.

*ա/*Ենթակա դերբայական դարձվածը.

Իր մայրենի լեզուն վատ իմացողը *կես մարդ է:*

Ինձ շատ ծանոթ և շատ մոտ է

Այդ ահավոր խանդ կոչվածը*:*

Ինչքան էլ ծանր է ***մանուկ թաղելը****,*

Մանուկ պահելը *ծանր է ավելի:*

*բ/*Ստորոգելի դերբայական դարձվածը.

Նրա համար ամենամեծ հաճույքը ***այգին ու արտը ջրելն է:***

Այնպես զգվող *՝ երեկոն անապի:*

Ամենատպավորիչը ***մանկության օրերի տեսածն ու լսածն է****:*

Ապրելու կեսն էլ ***պատվով մեռնելն է:***

*գ/*Հատկացուցիչ դերբայական դարձվածը.

Ով գեղարվեստասեր է, ***Լևոնին չճանաչելու*** *իրավունք չունի:*

Հայրենիքի համար զոհվածների *հիշատակը միշտ վառ կմնա մեր սրտում:* ***Ճիշտ խոսողի*** *գդակը ծակ է:*

*դ/*Ուղիղ և անուղղակի խնդիր դերբայական դարձվածները (որոշ բացառությամբ).

Մենք գիտենք ***մարտնչել կյանքում:***

Նա երբեք չէր նկատում ***իրենից ներքև գտնվողին:*** *Մի՛ վախեցեք* ***կեղծի մասին ճիշտ գրելուց:***

Տո՛ւր ապաքինում ***հոգով հուզվածին…***

Ձեռքից հավատը փախուստ տվածին:

*Նա իր հարստությունը կուտակել էր **շատերին շահագործելով, միամիտ մարդկանց խաբելով:***

է/ **Համակատար դերբայով արտահայտված նախադաս և միջադաս ճամանակի պարագա** դերբայական դարձվածը.

***Մանկությունս հիշելիս** սիրտս դառնում է գինով: **Վահանի հետ խոսելիս** Բաղամյանը հարմարվում էր նրա հեգնական տոնին և վարմունքին: Տղան **հորը տեսնելիս** շփոթվեց:*

*գ/ **Նախադաս որոշիչ դերբայական դարձվածը.***

***Քարափի գլխին կանգնած** ստվերն իմ ընկերն է: Դրանք **մեր ժողովրդի մեծությանը, վշտին, փախծին ընկերացող** երգերն են:*

*Այրին, իհարկե, հետզհետե կընտելանա **հարսին ընդունելու** մտքին:*

*է/***Կապի խնդրով ձևավորված նախադաս և միջադաս երբայական դարձվածը** (բացի զիջման պարագայից):

***Զանգը հնչելուց հետո** մենք դուրս եկանք: **Բակ մտնելուն պես** Գարեգինն զգաց վարդերի նուրբ բուրմունքը: **Արվեստի մեջ որևէ լուրջ բան ստեղծելու համար** միայն տաղանդը քիչ է: **Երկար ժամանակ սառը ջրում լողանալու պատճառով** նա մրսեց և հիվանդացավ: **Հրամանը հասարակ լինելու դեպքում** էլ զզիր Իբիշը խոսքը վերջացնում էր սպառնալիքով:*

Վերևի օրինակ-նախադասություններում կապերով ձևավորված ժամանակի, նպատակի, պատճառի, պայմանի պարագայի պաշտոններ կատարող առաջադաս դերբայական դարձվածները չեն տրոհվել: Բայց ահա վերջադաս դիրքում հանդես եկող նպատակի, պատճառի, պայմանի և հիմունքի պարագաները անհրաժեշտ հնչերանգի դեպքում կարող են տրոհվել:

Օրինակներ՝

Հոգնած ճամփորդը մոտեցավ աղբյուրին՝ **նրա սառնորակ ջրով րի ծարավը հագեցնելու համար:**

Նրանց միջև առաջացել էին սառը հարաբերություններ՝ **նախորդ օրը տեղի ունեցած սուր վեճի պատճառով**:

Մենք հանձն կառնենք կատարել այդ դժվարին գործը՝ **աշխատավարձը ժամանակին վճարելու պայմանով:**

Գիտնականը վերջապես հանգեց ճիշտ եզրակացության՝ **իր նախորդների փորձերը հանգամանալից վերլուծելու հիման վրա:**

Տրոհվող դերբայական դարձվածը նախադասության մյուս անդամներից առանձնացվում է կետադրությամբ և համապատասխան դադարներով ու ձայնային ելևէջներով: Տրոհումը նախադասության անդամների հնչերանգային առանձնացումն է իրենց լրացյալներից: Իսկ այդպիսի առանձնացումն ու տրոհումը կատարվում է արտասանական դադարների, համապատասխան հնչերանգի, շեշտի և շրջուն շարադասության միջոցով:Տրոհման շնորհիվ նախադասության կառուցվածքի մեջ այդպիսի լրացումներն ավելի ինքնուրույն դիրք են գրավում, տրամաբանորեն ընդգծվում են:Դերբայական դարձվածների ճիշտ տրոհումը ավելի պարզ ու որոշակի է դառնում լրացում-լրացյալի քերականական կապը:

Նախադաս և վերջադաս դերբայական դարձվածները նախադասության մյուս մասերից անջատել են բութով, իսկ միջադաս դերբայական դարձվածն, որն ընկած է նախադասության գլխավոր անդամների՝ ենթակայի և ստորոգյալի միջև, երկու կողմից տրոհվել է ստորակետով:Սակայն հաճախ միջադաս դերբայական դարձվածի դիրքը պետք է որոշել (և ըստ այդմ էլ կետադրել) ոչ միայն նախադասության ենթակայի և ստորոգյալի միջև ընկած լինելու հանգամանքով, այլ նաև նրանով, թե ինչ շարադասություն ունի տվյալ **դերբայական դարձվածն իր լրացյալի հանդեպ**: Ինչպես հայտնի է, նախադասության ամեն մի անդամ՝ արտահայտված մեկ բառով կամ բառակապակցությամբ, այդ թվում և դերբայական դարձվածով, իր լրացյալի նկատմամբ ունի երկու կարգի շարադասություն՝ **նախադաս և վերջադաս:** Բայց այս կանոնը հիմնականում գործում է գոյականական անդամի լրացումների (հատկապես՝ որոշչի) դեպքում: Եվ, անշուշտ, այդ է պատճառը, որ **որոշչի պաշտոն կատարող**

միջադաս դերբայական դարձվածն տրոհվում է իր լրացյալից բութով, նախադասության մյուս անդամներից՝ ստորակետով:

Բայց ահա հարակատար դերբայի միջոցով ձևավորված շատ դերբայական դարձվածներ տրոհվել են երկու կողմից ստորակետով, քանի որ համատեղում են և՛ որոշչի, և՛ պարագայի պաշտոններ:

Մեր ասելիքը ավելի համոզիչ ու ցայտուն դարձնելու համար փորձենք փոփոխել դերբայական դարձվածների շարադասությունը:

Իր հրամանատարական հարթակին ձիգ կանգնած(՝) նավապետը խրոխտ հրամաններ էր արձակում (չտրոհված դերբայական դարձվածն կատարում է որոշչի, իսկ բութով տրոհվելու դեպքում՝ պարագայի պաշտոն): Նավապետը խրոխտ հրամաններ էր արձակում՝ **իր հրամանատարական հարթակին ձիգ կանգնած** (պարագայի պաշտոն է կատարել վերջադաս դերբայական դարձվածը):

Բարդ նախադասության կազմում հանդես եկող դերբայական դարձվածը, ըստ իր լրացյալի նկատմամբ ունեցած հարաբերության, կարող է լինել կամ նախադաս, կամ վերջադաս և ըստ այդմ էլ տրոհվում է բութ-ստորակետով կամ ստորակետ-բութով՝ նայած, թե ինչ շարադասություն ունի իր լրացյալի նկատմամբ:

Սովորաբար տրոհվում են.

ա/ **Հարակատար և ենթակայական դերբայներով** ձևավորված վերջադաս դերբայական դարձվածները:

բ/ **Համակատար դերբայով** արտահայտված վերջադաս ժամանակի պարագան և ժամանակը մասնավորեցնող պարագայական բացահայտիչը, եթե նույնիսկ միջադաս էլ լինի:

ա/ **Անորոշ դերբայի գործիական հոլովով** ձևավորված ժամանակի, պատճառի, զիջման և հետևանքի պարագաները:

Հույս ունենալով նոր իրեր հայտնաբերել՝ *հնագետն ուշիուշով տեղազննություն էր կատարում (նպատակի պարագա):*

Ցանկանալով թեթևացնել հայրենիքի նկատմամբ կնոջ կարոտը՝ *Բաբելոնի թագավորը նրան նվիրեց Կախովի այգիները (նպատակի պարագա):*

Զվից նոր դուրս եկած բադիկները, ***իրենց մոր հովանու ներքո շորորալով, զբոսնում էին քչքչան առվի ափին*** *(ձևի պարագա):*

Չնայելով իր հսկա մարմնին՝ *Վահանը ուտում և խմում էր համեմատաբար չափավոր կերպով (զիջման պարագա):*

Բակում տեսնելով Միքայելին՝ *աղջիկն իսկույն սթափվեց (ժամանակի պարագա):*

Շտանելով հին կյանքը էլ՝ *նրանք կռվի էին եկել (պատճառի պարագա):*

Այրին, ***ապրելու ուրիշ միջոց չունենալով,*** *պարապում էր սենյակներ վարձու տալով (պատճառի պարագա):*

դ/ **Հարակատար դերբայով** ձևավորված ժամանակի, պատճառի, ձևի, հիմունքի, զիջման պարագաները (նախադաս, միջադաս և վերջադաս):

ե/ **Անորոշ դերբայի տրական հոլովով** ձևավորված վերջադաս նպատակի պարագա դերբայական դարձվածը:

Ակադեմիկոս Ս. Աբրահամյանը գտնում է, որ անորոշ դերբայի տրական հոլովով (առանց կապի) արտահայտված դերբայական դարձվածները անպայման պետք է տրոհել բութով:Սակայն այս տեսակետը որոշ վերապահումով պետք է ընդունել, քանի որ կան ոչ քիչ թվով նախադասություններ, որոնցում դերբայական դարձվածները անմիջապես հաջորդել են բայ-ստորոգյալին և չեն տրոհվել (քանի որ հնչերանգով չեն առանձնացնել, սերտորեն, առանց դադարի են արտասանվել):

Բայց այս անգամ եկար վերջնականապես, եկար ***խառնվելու քո նախնիների հողին:*** *Այս բազմությունը մրջյունի պես ջանք էր թափում* ***ծռելու հեղեղի հոսանքը:***

Այս կապակցությամբ հետաքրքիր դիտարկում է կատարել դոցենք Ա. Մարությանը: Նա գրում է. <<Եթե տվյալ բառակապակցությունը անմիջապես հաջորդում է բայ-ստորոգյալին, չի տրոհվում, իսկ եթե լրացման և լրացյալի միջև ընկնում է որևէ անդամ, տրոհվում է>>:

Եթե վերջադաս դերբայական դարձվածին հաջորդում է **և, ու, կամ** համադասական շաղկապով կապակցված համադաս, համազոր նախադասություն, ապա դերբայական դարձվածն շաղկապներից տրոհվում է ստորակետով:
Եթե նախադաս կամ միջադաս դերբայական դարձվածին հաջորդում է **եմ** օժանդակ բայը, ապա այն վերջինից չի տրոհվում հնչերանգի բացակայության պատճառով:
Երբ վերջադաս դերբայական դարձվածին նախորդում է նույն հարցին պատասխանող և նույն պաշտոնը կատարող այլ բառեր կամ բառակապակցություն, ապա դերբայական դարձվածն անջատվում է այդ անդամից ոչ թե բութով, այլ ստորակետով:
Սակայն եթե դերբայական դարձվածն առաջադաս է, և նրան հաջորդում է նույն պաշտոնը կատարող բառ կամ բառակապակցություն, այդ դեպքում դերբայական դարձվածն անջատվում է ստորակետով, իսկ նրան հաջորդող բառը հիմնական նախադասությունից՝ բութով:

Գլուխ երկրորդ: Դարձվածքների ուսուցումը հիմնական և ավագ դպրոցներում

Հանրակրթական դպրոցում դարձվածքներն ուսումնասիրում եմ առաջինից 11-րդ դասարաններում, առարկայական չափորոշիչով թմատիկ ուսումնասիրությունը հիմնականում կատարվում է 6-րդ և 10-րդ դասարաններում:

Դարձվածքները ամենագունեղ, ամենախոսուն, նկարագրական, ժողովրդական իմաստություն պարունակող լեզվական միավորներն են: Հ. Պետրոսյանը դարձվածքը համարում է լեզվի արտահայտչական կարևորագույն միջոց. լեզվական ոճավորման անհրաժեշտ տարր: Պ. Բեդիրյանը դարձվածք է համարում երկու կամ ավելի բառերից կազմված պատկերավոր գաղափար կամ միտք արտահայտող վերաիմաստավորված, պատրաստի, վերարտադրելի կայուն բառակապակցությունը կամ նախադասությունը: Փորձենք բացել այս սահմանումը:

- Դարձվածքը միաբառ չի կարող լինել. այն անպայման բազմաբաղադրիչ է, անմիատարր. միաբառ դարձվածք չկա:
- Դարձվածքի բաղադրիչ միավորները՝ բառերը հանդես են գալիս ոչ թե իրենց ուղղակի իմաստով այլ փոխաբերական:
- Դարձվածքային ամբողջական կապակցության իմաստը չի բխում նրա առանձին բաղադրիչների իմաստների գումարից, այլ բոլորովին նոր իմսատ է ձեռք բերում՝ վերաիմաստավորվում է:
- Դարձվածքը ոչ թե կազմվում է խոսելու պահին, ինչպես սովորական բառակապակցություններն ու նախադասությունները, այլ խոսելիս՝ անհրաժեշտության դեպքում՝ ելնելով խոսքի իրավիճակից. այն հիշվում և մեջ է բերվում խոսքի մեջ որպես պատրաստի կառույց այսինքն՝ վերարտադրվում է:

Ուսուցման պրոցեսում դարձվածքների նշանակությունը, ոճական կարևորությունը առանձնացնելու համար կարելի տարբերակված ուսուցում կազմակերպել: Օրինակ՝ գույների անուններով դարձվածքների ուսուցում: հատկանիշը դառնում է առարկայի երևույթի խորհրդանիշ նաև գույների միջոցով

դրանք անվանելիս: Մարդը դարեր շարունակ սև գույնը օգտագործել է տխուր առիթներով, կարմիրը՝ ուրախության, հաղթանակի, կանաչը՝ գարնան կյանքի ծաղկունքի, կապույտը՝ երազանքի, ցնորքի, անհասանելության, սպիտակը՝ մաքրության, պարզության, անաղարտության հետ կապված: Գույների այս խորհրդանշական առանձնահատկությունները ավանդույթի ուժ են ստացել, լայնորեն հանդես եկել գրավոր և բանավոր խոսքում նաև դարձվածքներում:

Կանաչ ածականը վերաիմաստավորված հատկանիշով գործածվում է՝ կանաչ լույս վառվել, *կանաչ արևով երդվել, կանաչ ախպեր, կանաչ արև* դարձվածքներում: Կանաչը զուգորդվելով կարմիրի հետ խորհրդանշում է ամուսնություն, հարսանիք, կնունք՝ *կանաչ կարմիրը կապել*:

Կարմիրը դարձվածքի բաղադրիչ է դառնում խորհրդանշելով ուրախություն, պայծառություն, կյանք.

Կարմիրը սևի հետ հանդես գալով նպատակ ունի հակադրություն ստեղծելու՝ *կարմիրը դուրս անել, սևը՝ ներս* դարձվածքը նշանակում է վիշտը թաքցրած ապրել, արտաքուստ ուրախ, ներքուստ տխուր լինելը.

Կարմիրը արյուն բառի հետ խերհրդանշում է իրեն ազնվական ձևացնող մարդկանց՝ արտոնյալ կյանքով ապրող.

Կարմիրը լույս գոյականի հետ նշանակում է մի բանի արգելք հանդիսանալ.

Վարդագույն ածականը ակնոց բառի հետ կազմում է կյանքին վարդագույն ակնոցով նայել դրձվածքը, որը լավատեսություն, պայծառատեսություն է նշանակում:

Խորհրդանշական բազմազան իմաստներ ունի սև ածականը: Սևը թուղթ գոյականի հետ բոթաբեր լուր է՝ *սև թուղթ:* Ժողովրդի մեջ տարածված դարձվածքներ են՝ *սև թուղթ, սև գործ, սև կատու, սև ձյուն, սև ամպ, սև բիծ, սև սիրտ, սև օր, սև ժամանակներ:* Սևի իմաստը ավելի թ սաստկացնում մութ ածականը.

Սև-մութ ամպեր գլխիս դիզվան.

Սև ածականը շատ դարձվածքներում կարող՝ հանդես գալ նաև փոխանվանաբար և թեքվել՝ *սևը տալ, սևի ռաստ գաս, սևով գալ, սևից անպակաս* և

այլն:Ինչպես տեսանք գունանունները խորհրդանշայի դարձվածքներ են ստեղծում և խոսքը դարձնում առավել պատկերավոր:

Պրոֆեսոր Խ. Բաղիկյանը տարբերակում է դարձվածքների երեք շերտ՝ գրական, ժողովրդախոսակցական և բարբառային: Ըստ նրա՝ բազմաթիվ դարձվածքներ ժամանակի ընթացքում մշակվում, նորմավորվում և անցնում են գրական լեզվին: Այդպես է գրական դարձել հազարավոր դարձվածքներ՝ *արջի ծառայություն մատուցել, շան ու կատվի բարեկամություն, աչքի արդար յուղ, աստծու գառ, գլխին նստել, խոսքը կտուր գցել, ականջին օղ անել, մեծ կտորը ականջը թողնել, դասը տալ, քարից հաց քամել, խորտակվող նավում պաշտոններ բաժանել և այլն*:

Հազարավոր դարձվածքներ էլ կան, որոնք ստեղծվել են գրողների, ստեղծագործողների, քաղգործիչների և այլ անհատների կողմից: Այսպես հին հունկանա, լատինական դարձվածքներանցել են աշխարհի շատ լեզուներին՝ *դամոկլյան սուր, աքիլլեյան գարշապար, պրոկրուստեյան մահիճ, ավգյան ախոռներ մաքրել, բաբելոնյան աշտարակաշինություն, դանայիդյան տակառ, գորդյան հանգույց, մեդուզայի հայացք* և այլն:

Գրական դարձվածքներ են նաև «Աստվածաշնչից» մեր լեզվին անցած դարձվածքներ՝ *ակն ընդ ական, ահեղ դատաստան, Աստծո գառ, ավազի վրա տուն շինել, Ավետյաց երկիր, Բաբելոյան աշտարակաշինություն, գառան մորթով գայլ, Հուդայի համբույր, Սոդոմ-Գոմոր, ձայն բարբառո հանապատի, արգելված պտուղ* և այլն:

Գրական դարձվածքները պրոֆեսոր Բաղիկյանը ևս տարբերակում է:

Արվեստի տարբեր բնագավառներից ծագած.

- նկարչությունից՝ *9-րդ ալիք, խաղաղության աղավնի, վրձնի քթից թռած,*
- թատերական արվեստից՝ *կուլիսների ետևում, թատերաբեմ դուրս գալ, դիմակը պատռել, իր դերում լինել,*
- երգարվեստից՝ *առաջին ջութակ, մեկի երգը երգված է, հին երգը երգել, մեկի դուդուկի տակ պարել,*

- գիտության տարբեր բնագավառներից՝ *ծանրության կենտրոն, մագնիսական դաշտ, պատրաստի դեղատոմս,*
- մաթեմատիկական ծագում ունեցող՝ *ընդհանուր հայտարարի բերել, հավասարեցնել զրոյի, հավասարության նշան դնել, ինտեգրալի նշան դարձնել, հակադարձ համեմատական լինել* և այլ,
- ռազմական, սպորտի, գյուղատնտեսության, կրոնի և կյանքի այլ բնագավառներից առաջացած՝ *սուր ճոճել, զենքերը ցած դնել, սվիններով դիմավորել, վերադառնալ վահանով կամ վահանի վրա, խոթը քարին դեմ առնել, կամը կալից հանել, ջրի ճամփա դարձնել, կթու կով, հին գայլ, ուրիշի ձեռքով կրակից շագանակներ հանել, խունկ ծխել, ջրի երես ելնել, ծեր աղվես* և այլն:

Դարձվածքների մյուս տարբերակումը ժողովրդական ծագում ունի. մեծ թվով դարձվածքներ առաջանում են ժողովրդախոսակցական լեզվում ու բարբառներում: Շատ գրողներ, ստեղծագործողներ, գործածելով դրանք իրենց գործերում ստեղծում են ժամանակի կոլորիտ, անահատականացնում են գրական հերոսներին, ընդգծում նրանց սոցիալական ծագումը, միջավայրը, կրթականա մակարդակը:

Դժվար թե գտնվի որևէ հայ մարդ, որ չիմանա Թումանյանի ստեղծագործությունների թեմաներով առաջացած դարձվածքների իմաստները՝ *Զախորդ Փանոս, սուտլիկ որսկան, Անբան Հուռի, մի կաթիլ մեղր, անբախտ վաճառականներ, Նեսոյի քարաբաղնիս, բալը թանկ է, Քաջ Նազար, Կիկոսի մահը* և այլն:

Իսահակյանի ստեղծագործություններում դարձվածքները նույնպես մեծ ժողովրդայնություն են վայելում և դարձել են բանավոր լեզվի անկապտելի մասը. դրանցից են՝ *աչքը ճամփին ծով դառնալ, խելքին քշա անել, կուրծքը թոշ տալ, վիզը դնել մեկի շեմին, գլուխը դնելու տեղ չգտնել, քարից հողից հաց քամել, խելքի տունը մտնել* և այլն:

Այս և նման շատ դարձվածքներ կիրառվում են առօրյա-խոսակցական կամ կենցաղային ոճերի ոլորտներում: Այս տիպի դարձվածքներին բնորոշ են մտքի սրությունն ու վառ երևակայությունը, խոսքի դիպուկությունն ու հումորը: Եվ վերոհիշյալ դարձվածքները ուսումնասիրելիս նպատակահարմար է օգտագործել տարբեր մեթոդներ ու հնարներ. պատկերազարդում ենք դարձվածքները, գունավորում ենք նկարված դարձվածքը, գտնել նկարի և դարձվածքի անհամապատասխանությունը: Նպատակահարմար է հոմանիշ, հականիշ, ուղիղ և փոխաբերական իմաստներով դարձվածքները ուսուցանել T-աձև աղյուսակով, դարձվածքների ճիշտ ու սխալը տարբերակելու համար էլ կարելի է կազմել Quiz-ով խաղ դարձվածքներ: Շատ հետաքրքիր նկարելուկ դարձվածքներ են կազմվում մարմնի տարբեր մասերին առնչվող դարձվածքներով: Մարմնի մասերի անվանումներով կազմված դարձվածքները ևս շատ գործածելի են. օրինակ՝ հայոց լեզվում գլուխ բառով 700-ից ավելի դարձվածքներ կան, որոնք բացի իրենց բուն իմաստներից կարող են ունենալ այլ իմաստներ ևս: Իսկապես դարձվածքային ֆոնդի համակարգում թվային քանակով մարմնի մասերի անուններով կազմված դարձվածքների համակարգն է գերիշխողը. դա է հաստատում մի փոքրիկ վիճակագրություն՝ գլուխ բառով 700, աչք-ով՝ 660, սիրտ բառով՝ 395, ձեռք-ով՝ 380, ոտք-ով՝ 345, բերան բառով՝ 268, լեզու բաղադրիչով՝ 180, քիթ բառով՝ 166, ականջ-ով՝ 145, մատ-ով՝ 78, ատամ-ով՝ 65, մազ-ով՝ 40 այլն:

Ըստ լեզվաբանների գրեթե բոլոր լեզուներում նույնպես մարմնի մասերի անվանումներով կազմված դարձվածքները մեծ թիվ են կազմում:

Ժողովրդախոսակցական դարձվածքներում մեծ տեղ են գրավում կենդանիների ու թռչունների, սողունների անուններով կազմված դարձվածքները: Նման դեպքերում ժողովուրդը կենդանիներին բնորոշ հատկանիշներով վերաիմաստավորված կերպով բնութագրում է մարդկանց, նրանց արարքներեն ու բնավորությունը: Այսպես, օրինակ, աղվեսի հատկանիշով բնութագրում ենք խորամանկ, իր անելիքը լավ իմացող մարդուն, իսկ ագահ և չար մարդը համեմատվում է գայլի հետ: Չարալեզու, չար

հայացք, նախանձ, վատ կամեցողություն ունեցող մարդկանց ժողովուրդը բնութագրել է օձի հատկանիշներով: Աշակերտներին կարելի է հանձնարարել խմբերով հավաքել նշված հատկանիշներով դարձվածքներ: Արդյունքում կունենանք նման խմբեր՝ *գայլի ախոժակ ունենալ, գայլին գառ պահ տալ, գառան մորթով գայլ, գայլը ամպ օր էր ման գալիս, գայլի գլխին ավետարան կարդալ, օձի կծած, օձի լեղի, օձի թույն, օձի հայացք, օձի պես սառը, աղվես նալող, աղվեսն իր պոչն է վկա բերում, աղվեսի դունչը խաղողին չհասավ, աղվեսին հավանոցի պահակ կարգել* և այլն:

Քանի որ մարդու ամենաշուտ ընտելացրած և ամենամոտ կենդանին շունն է, իր լավ ու վատ հատկանիշներով դարձել է մարդու և նրա բնավորության հատկանիշները բնութագրող համեմատության եզր: Շուն բառով ամենաշատ դարձվածքներն են ստեղծվել՝ *շան օրն ընկնել, շան երես ունենալ, շան պես հասկանալ, շունը շապիկ է հագել, շունը տերը չի ճանաչում, շան լեզու ունենալ*:

Հիմար, տգետ մարդուն բնութագրելու համար ժողովուրդը օգտագործել է էշ բառը, որով մեր լեզվում ունենք 40-ից ավելի դարձվածքներ՝ *էշը քշել, էշը ցեխից հանել էշի ականջում քնել, էշի նահատակ դառնալ, էշից ընկնել, էշին քեռի կանչել*:

Մեր լեզվում դարձվածքներ են կազմվել նաև կատու, ձի, ձուկ, ուղտ, առյուծ, մուկ, գառ և այլ կենդանիների անուններով:

Դարձվածքների մեծ խումբ է կազմում բարբառային դարձվածային միավորները: Ինչպես որ ամեն բարբառ ունի իրեն հատուկ բառապաշարը, այնպես էլ բարբառախոս ժողովուրդը, պայմանավորված իր սովորույթներով, իր տարածքով ու բնակլիմայական պայմաններով, աշխարհագրական միջավայրով, հազար ու մի այլ գործոններով, ստեղծել է իրեն հատուկ, բարբառով խոսող ժողովրդի համար հասկանալի ու ընդունելի դարձվածքներ: Շատ դարձվածքներ տարբեր բարբառներում կարող են անհասկանալի լինել, կամ ընդհակառակը համընկնել: Չի բացառվում, որ բարբառային շատ դարձվածքներ մշակվելով անցնեն գրական լեզու: Ժողովրդական այդ գանձարանից օգտվում են նաև մեր գրողները, ինչպես օրինակ Թումանյանը, Աբովյանը, Պռոշյանը, Աղայանը, որոնք իրենց ստեղծագործություններում

վերարտադրել են իրենց մայրենի բարբառների դարձվածքները՝ հարազատ մնալով գյուղացու լեզվամտածողությանը, նրա բառ ու բանին, խոսք ու զրույցին: Այս դարձվածքների առաջացման աղբյուրներն են ամենատարբեր երևույթները, առարկաներոն ու հանգամանքները, արհեստներն ու արվեստները, սովորույթներն ու հավատալիքները, մարդկային փոխհարաբերություններն ու բնավորության գծերը: Կան բազմաթիվ դարձվածքներ, որոնք հատուկ են միայն տվյալ բարբառին: Օրինակ՝ Գյումրու բարբառում տարածված *գլխին քարկտիկ խաղալ*-ը չկա ոչ մի բարբառում. դա գլխին խաղ խաղալը չէ և ոչ էլ՝ գլխին օյին բերելը. ավելի մոտիկ է քթից բռնած ման տալու իմաստին: Աշակերտների մի խմբի հանձնարարվում է գտնել նման դարձվածքներ՝ որպես նախագծային աշխատանք:

Բարբառներում կան դարձվածքներ կապված գյուղատնտեսության, հավատալիքների, դպրության, զենքերի տեսակների հետ, ինչպես օրինակ՝ *կամն առնել՝ քարերն ընկնել, ծուռ ակոսը մեծ եզից է, կալից ինչ տեսանք, որ կալատակից ինչ տեսնեինք, հին դարմանը քամուն տալ, ճիպոտը կամին դնել, երկնային դրախտի փայ ու բաժին դառնաս, սատանի ետևի ոտները նալող, թիվ ու հեսաբ չիմանալ, փորը այբի կտոր չլինել, գյուլլախորով լինել, թոփ ու բարխանի ռաստ գալ, իրար հետ թուր ու թվանք լինել:*

Որպես նախագծային աշխատանք՝ կարելի է հանձնարարել տարբեր բարբառների, կյանքի տարբեր բնագավառներին վերաբերվող դարձվածքներ հավաքել:

Ինչպես բառերը, բառակապակցությունները, այնպես էլ դարձվածքները կարող են ստեղծվել մեր օրերում. դրանք նորաբանություններն են, որոնց ստեղծման ու տարածման հիմնական աղբյուրը մամուլն ու հեռուստատեսությունն են: հիմնականում սրանք են, որ ելնելով իրավիճակի պահանջից, նոր երևույթներն ու հարաբերությունները պատկերավոր կերպով բնութագրելու համար ստեղծում են նոր դարձվածքներ, կամ եղածներին նոր իմաստներ են տալիս: Դարձվածքային նորաբանությունները պայմանավորված են հասարակական, քաղաքական կյանքում

տեղի ունեցող փոփոխություններով, նաև նոր ծնունդ առած ու առաջացած իրադարձություններով, մարդկային հարաբերություններով: Նոր դարձվածքներ են առաջանում նաև գիտության ու տեխնիկայի արդյունաբերության ու գյուղատնտեսության, մշակույթի ու սպորտի նորությունների հետ կապված: Վերջին տարիներին լույս աշխարհ եկած դարձվածքային նորաբանությունները, 4-րդ իշխանությունը, 5-րդ խոսափող, իրավական դաշտից դուրս, խաղից դուրս վիճակում, 5-րդ շարասյուն, 5-րդ անկյուն, քաղաքական դաշտի թափոն, տակառ գլորել մեկի վրա, քար նետել սեփական ոտքերի տակ, կոռուպցիան կերավ մարդկանց, չինովնիկի բերանը յուղել և այլ դարձվածքներ: Իր ուսումնասիրություններում Խ. Բաղիկյան նշում է, որ վերջերս լեգիտիմ բառն է դարձել դարձվածքի բաղադրիչ և շատ է օգտագործվում դարձվածքային նորաբանություններում. օրինակ՝ ոտքերդ լեգիտիմիդ չափ մեկնիր, եղունգ ունես լեգիտիմությունդ քորիր, ոչ լեգիտիմ գլուխը ոտքերի համար տանջանք է (մամուլ):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքի հարցը ձևակերպվել էր «Դարձվածքների ուսուցման շրջանակներում ի՞նչ հնարներ են օգնում՝ զարգացնելու լեզվական հմտությունները»: Դարձվածքների ուսուցումը զանազան վերը նշված հնարների օգնությամբ զարգացնում է լեզվական գրագիտություն և կարողունակություն, որի շրջանակներում սովորողները տիրապետում են հայոց լեզվի գրական, ժողովրդախոսակցական, բարբառային հարուստ մի շերտի՝ դարձվածքների ճանաչմանը, ընկալմանը, դասակարգմանը: Սովորողները ընդունակ են բանավոր և բավոր ձևերով ճանաչել, ըմբռնել, արտահայտել, ստեղծել և մեկնաբանել տարբեր դարձվածքային միավորներ: Լեզվական այս թեմայի ուսուցման շրջանակներում սովորողները ձեռք են բերում նաև մշակութային կարողունակություն. նրանք ճանաչում են հայ մշակույթն ու մարդկային քաղաքակրթությունների մշակությաին բաղադրիչները՝ որպես մարդկային զգացմունքների և գործողությունների կողմնորոշիչներ: Նրանք արժևորում են սեփական ինքնությունը, ընտանիքի համայնքի պետության դերը, ունեն հասարակական քաղաքական համակարգի հիմնարար իմացություն: Նրանք ի վիճակի են իրենց հետազոտական, նախագծային աշխատանքներում զարգացնել տվյալ թեման և տեսնել այդ թեմայի մշակութային և գեղագիտական կողմը՝ արժևորել հոգևոր և նյութական ժառանգությունն ու մշակութային բազմազանությունը, ձևավորել մշակութային գրագիտություն և ճաշակ:

Դարձվածքային միավորների նման ուսուցումը կարելի է կազմակերպել զանազան հնարների, մեթոդների օգնությամբ, կարելի է կազմել ռեբուսներ, դարձվածքային աղյուսակներ (T-աձև, m-աձև աղյուսակներ), համադրել, հակադրել, հոմանիշային, հականիշային փնջեր ստեղծել: Ի վերջո նկարազարդումների օգնությամբ (գունավորված, ներկիր ինքդ) ստեղծել դարձվածքների պատկերներով, երգիծական, հումորային, գրոտեսկային նկարներ:

Սույն հետազոտական աշխատանքը միտում ունի, որպեսզի սովորողները ստույգ պատկերացում ունենան մեր լեզվի հարստության, պերճության,

գեղեցկության, ճկունության և քաղցրության մասին: Տեղին է հիշել 5-րդ դարի մեր շնորհաշատ պատմիչ Եղիշեին. «*Հունարենը մեղմ է, հռոմեական լեզուն՝ հզոր, հոներենը՝ ահաբեկող, ասորոորոնը՝ աղերսկան, պարսկերենը՝ պերճ, ալաներենը՝ գեղեցկազարդ, գոթերենը՝ հեգնական, եգիպտերենը՝ տափակախոս ու խավարաձայն, հնդկերենը՝ ճռվողական, հայերենը՝ քաղցր, որը միաժամանակ կարող է մյուս բոլոր լոզուների հատկություններն ամփոփել իր մեջ*»:

Հետևաբար՝ կատարենք մեր մեծ լուսավորչի պատգամը. «*Ձեզ եմ ասում, ձեզ հայոց նորահաս երիտասարդք, ձեր անումին մեռնիմ, ձեր արևին դուրբան, տասը լեզու սովորեցեք, ձեր լեզուն, ձեր հավատքը ամուր բռնեցեք*»:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա. Սուքիասյան, Ս. Գալստյան «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան». Երևան 1975թ.,

2. Ս. Մելքոնյան «Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության», Երևան 1984թ.,

3. Խ. Բաղիկյան «Դարձվածային ոճաբանություն», Երևանի համալսարանի հրատարակչություն, 2000թ.,

4. Խ. Բաղիկյան «Ուսումնական դարձվածաբանական բառարան», Երևանի համալսարանի հրատարակչություն, 2002թ.,

5. Պ. Բեդիրյան «Դարձվածաբանական բացատրական բառարան», Երևան 1971թ.,

6. Գ. Ջահուկյան, Է. Աղայան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան «Հայոց լեզու», մաս 1, Ապրակ, Երևան, 1980թ.,